

Բ. ԶԻԼՎԱՅՑՈՒ

# Բայրուիլ Աշուուր



ՀՐԱՏԱՐԱԿԵՈՒԹՅՈՒՆ «ԶԳԿԿՆԻԳՎ»-Ի

891.99  
Ճ-58

891.99

Q-58

Թ. ՁԻԼԱՎԵՍՆ

12 MAR 2011

Մ


# ԲԱՏՐԱԿ ԱՎՄՈՒԼ

Նկարները նկարիչ

ԱՐՈՒԵՏԶՅԱՆԻ

3971

1008  
38451



Հ. Ա. Կ. Պ. Ա.  
1929

MS RAM 51

Джилавин  
«Батрак Самуил»  
ЗАКНИГА

## ՄՈՒԾԱՐԻ, ՎՈՏ ՎԵՐ ԿԱԼ, ԶՈՒՏՍ ԱՐԻ

Բարդի զյուղում կոռպերատիվ բացվեց չբացվեց Թյունու գործը վաս գնաց: Ժողովուրդն յերեսը Թյունուց միանգամայն շուռ տվեց և Թյունու բերանը բաց մնաց:

Թյունին, վոր միջահասակը լղար, յերկար գլխով ու սուր քթով մի մարդ եր, մոտ 30 տարեկան, իր խանութի դռանը տիսուր նստած՝ սպասում ե մուշտարու, բայց մուշտարին այլ ևս վոտ չի դնում նրա խանութը. նա ճամբան թեքելով գնում ե դեպի նոր բացված կոռպերատիվը, իսկ Թյունին հուսահատ շարժում ե գլուխը:

— Սրա, Մակուչի թոռ, — ձայն ե տալիս Թյունին դառնացած, — արա, դու յելա դես արի ե, ինչ ես հեռու փախչում:

Մակուչի թոռն անորոշ քայլերով մոտենում է նրան:

— Ի՞նչ կա, Թյունի:

Տպարտն «Զարյա Կոստոկա»-ին. Պատկեր № 1749. Գլավիս № ԱՇՀ  
Տիբաժ 5000.



— Բա՛, մի բարով ել չկա՛:  
— Բարի հաջողում:  
— Այ անհատ բարի՞ն, մի արի տեսնեմ, մի  
արի, խանութս քեզ փեշքաշ, ետ ուր բարի...  
— Կոռալերատիմն եմ գնում, Թյունի ջան:  
— Կոռալերատիվ, հա կոռալերատիվ, դուք  
ել շինեցիք նախշ ու նիդյար, ասա տեսնեմ, ի՞նչ  
կտ այստեղ:

— Ասում են, մթամ լավ գերանդի ա յե-  
կել, գնում եմ աչք ածեմ,—պատասխանեց նա  
ծոծրակը քորելով:

— Այ Մակուչի թոռ, յես վաճառական մարդ  
եմ, ինձ կոռալերատիվին թայ մի անի, գերանդի  
յես ուզում, արի լավերի լավը տամ: Յեվ Թյու-  
նին նրա թեկից քաշելով տանում ե ներս, ցույց  
ե տալիս մի քանի գերանդի, մեկ-մեկ վերցնում  
կոթից, զրնգայնում և մոտեցնում նրա ական-  
ջին:

— Արդա՛, գերանդի յեմ ասում ե, հալբաթ  
կոռալերատիմն ես տեսակ ապրանք ունի, դու-  
սրա ժանդին մտիկ մի տուր, համ ել քեզ ապա-  
սիկ կտամ, դէ, վաճառականի խասյաթն աստոծ  
կտրի, զիտես ելի, ժողովրդի համար մեռած եմ,—  
ասաց Թյունին և աջ ձեռով թվիթփայնելով նրա  
կոնսակն ավելացրեց, —դոչադ կաց, կանգնած եմ  
թիկունքիդ:

Մակուչի թոռը ժանդուած  
գերանդիների գլխին—պոչին նա-  
յելուց ու ձեռքում շուռ ու ման  
անելուց հետո, դուրս յեկավ խա-  
նութից, խոստանալով հարկավոր  
դեպքում նրանից գնեւ:

Թյունին դարձյալ ընկղմվեց  
թմրության մեջ, բայց մի առժա-  
մանակ հետո նկատելով Սարոյին՝  
ձայն տվեց, աջ ձեռքն ողում տատանելով.

— Սարն, Սարն...

— Հե՛յ, —պատասխանեց Սարոն:

— Մի գեսն արի՛, գեսը:

— Այտա, հանդը խրակեց ու խանձվեց,  
դու ել ասում ես գեսն արի՞... բարկությամբ  
պատասխանեց Սարոն և շտապեց իր գործին,  
գերանդին ուսին դրած:

Թյունու աստղը խավարել եր. վոչ վոք չեր  
հետաքրքրվում նրանով, կարծես նա այլևս գո-  
յություն չուներ այդ գյուղի համար և նա ըն-  
կավ մտքի հետեկից: Յերբեմն ել իր խանութի  
յետեկի կողմով գնում եր ձնշլապաշարենց հա-  
սարի տակից կոացած, թագուն նայում կոռալե-  
րատիվին. ի՞նչ խալիս կար, բոլորն այնտեղ եր:

— Այ Թյունի, տունդ քանդվի վայ Թյու-  
նի, տես, ժողովուրդը վոնց ա ձադ տված ձան-



Ճի նման նի տալի կոռպերատիվը, մի տես, են բիրադի իմ մուշտարիքն են. Զախմախենց Գրիգորը, Կունդուզի Բեղլարը... ինքն իրեն խոսում եր Թյունին ու գլխին վեր տալիս:

Հունձի ժամանակն եր. Նրանցից վորը գերանդի յե առնում, վորը սրոց, վորն ել ուրիշ բան: Հապա Փորսողենց Արամաշը. բարձրահասակ, բեշմետը հազին, դազգահի այն կողմը սարի պես դոշը դեմ տված ու փեշերը գոտուն խրած՝ ապրանք ե բայ թողնում: Նա մի ժամանակ ուզում եր Թյունու քրոջը, բայց Թյունին դուրս վճնդեց նրան իր շեմքից, վորովհետև նա բարի համբավ չեր հանել: Իսկ հիմա տես, ինչ մարդ ե դարձել:

Դա չլինի, կոռպերատիվը շունչը կտա,— մտածեց Թյունին և գլուխը կախ, քոռ ու փոշման յետ դարձավ իր խանութը:

Իր խանութի առաջ, ցեխոս շրջապատում դեռ կանգուն ե մնացել մի մետրաչափ բարձրության հաստ ծառի կոճդ: Թյունին իր սրածայր դդակով ըստ սովորականի բարձրացավ ու նըստեց այդ կոճդի վրա ծալապատիկ, աջ ձեռքը դրեց ականջին, դարձավ մինարե մի անապատում ու կանչեց զիլ ձայնով, առանձնապես շեշտելով առաջի վանկը.

— Մնաշտարի, վոտդ վեր կալ, չնւստ արի:

Մուշտարին չեկավ, սակայն կոռպերատիվի մոտ հավաքված գյուղացիներից մեկը՝ Մկրտում ապին ասաց.



— Տղե՛րք, բան բրառուդ անում ե՞ք:  
— Ի՞նչը, ապի:

— Հըե Թյունին խալիսի կաշին մաշկեց,  
հիմա ել մուշտարի աղի տալիս, համա զուր  
բանա:

Կոռպերատիվը վորպես մի լիքը փեթակ  
կանգնած ե զյուղամիջում ճակարը բաց, վոր-  
տեղ գյուղացիները ժրաշան մեղուների նման  
խոնված են նրա շուրջը՝ ու վորը ներս ե մըտ-  
նում, կամ վորը դուրս ե գալիս:

Կյանքը յեռում ե այնտեղ:

Այն ինչ Թյունին հորանջում ե, ճըլըմկո-  
տալով ձգվում ե անգործությունից հոգնած:  
Միապաղաղ ու թմրած աչքերով, անորոշաբար  
նայելով իր դատարկ շրջապատը, քունը գլխին՝  
նա հուսահատ և ավելի նվազ ձայնով կըկնում ե.

— Մուշտարի, վոտդ վեր կալ, չուստ արի:  
Բայց իզուր բան ե... մուշտարին չկա:

II

## ԴՈՒԼԱԶ ԸՆԿԱՌ ՂՈՒԶՂՈՒՆՆԵՐ

Սի առավոտ ել ժողովուրդը վեր կացավ,  
ինչ տեսավ. Թյունին չկա: Դես Թյունի, գեն  
Թյունի, գյուղը տակն ու վրա արին, չկա ու  
չկա: Շատերն ասում եյին, թե Թյունին քա-  
րիցն ընկավ, բա ջամդաքն ինչ յեղավ. մի քա-  
նիսն ել, թե անտառում դիլմնոնց փայ դառավ.  
վոմանք ել, թե զլուին առավ, փախավ Դա-  
ղլստան:

Թյունին կորավ. կոռպերատիվը կըկնապա-  
տիկ ծաղկեց. սակայն կարծես թե գյուղը կոր-  
ցրել եր մի կարեռը բան. չեր լսվում Թյու-  
նու ծանոթ կանչը: Բացի գրանից սաստիկ  
զգացվում եր և այն հանգամանքը, վոր գյուղում  
չկա այլև վոչ մի արագախոս, միայն Թյունին  
եր, նա ել կորավ. մինչեւ մուշտարին մի անգամ  
կհորանջեր, Թյունին քոքած մեջենայի նման կը  
դռուար և ապրանքն արդեն ծախաված եր:

Մի որ ել տեսան Թյունին գյուղումն ե, զարմացան. բանից դուրս յեկավ, վոր նա գնացել եր այլ քաղաքներ բախտ վորոնելու, սակայն ամեն աեղ ել նույն կարգերը գտնելով՝ վերադարձել եր քոռ ու փոշման:

Արա Թյունի, ելի լիս ընկածը, — ծիծաղելով դիմում եյին գյուղացիք նրան պատահելիս:

Աջից մղդսի Ակոբին առած, ձախից՝ քյաբաբչի Սողոմին, Թյունին շրջում եր գյուղում գլուխը քաշ գցած և միանգամայն հուսախաբ:

Մղդսի Ակոբը հետեւում ե սպարի նման գլխիկոր, լուռ և սապատը մասսամբ դուրս ցցված. Նա սաստիկ յերկար բոյ ունի, իսկ քիթն անհամեմատ ավելի մեծ ե, քան նրա յերկար բոյը կալահանջեր: Նա նմանվում եր ձորի ծերպին կախ ընկած մի հսկա ժայռի, վորը միայն մեկ մահանի յե բանդ, անսանի գոռում-գոչունով ցած գահավիժվելու: Նա շրջում ե լուռ, իմաստունի համեստությամբ և մեծ մասամբ անզատասխան ե թողնում իր խոսակիցների հարցականը: Թյունու ձախ կողմից քայլում ե կարճահասակ քյաբաբչի Սողոմը՝ վրան յերկար վերաբեր, վորի ձախ թին ամառ-ձմեռ միշտ հա-

գած ունի, իսկ աջը վերաբերուի տակ: Նա ժամանակին ճաշաբան եր պահում, վորաեղ մարդիկ եր հարբեցնում: Իսկ այժմ իր յերկար գըգակը աչքերը գցած, աջ ձեռքի ձեռնափայտը մեկնած դեպի կոռպերատիվն, ինչ վոր բան ե վնթինթում:

Մի խամ մարդ ել կկարծեր, թե զբանք կնճռուա հարցեր են վճռում, գյուղի բախտն են վորոշում. և խսկապես կար ժամանակ, վոր այդպես եր: Իսկ այժմ Թյունին հույսն ամեն բանից կտրած, ապավինել ե իր միակ կարեկիցներին, խնդրելով մի աշտկություն, մի խորհուրդ:

— Ի՞նչ խորհուրդ, այ խելքի պակաս, տեղն ե, թող աչքդ հանի, թող, — ասաց քյաբաբչի Սողոմը, գեռևս իր ձեռնափայտն յերկարացրած պահելով դեպի կոռպերատիվը: Մղդսի Ակոբը լուռ եր:



— Այսր ինչնեւ, այ Սողոմ, ինչնեւ... սըրսաւնեղությամբ հարցըրեց Թյունին՝ իր խղճահարված հայացքը դարձնելով մեկ դեպի Սողոմը, մեկ դեպի մղդմի Ակոբը, կարծես պաշտպանություն լիներ հայցելիս:

Այդ ըռպեյին գյուղի հորթարած բատրակ Սամուլը, մի կիսամերկ յերիտասարդ, սըրնթած սլացավ նրանց առաջով, մահակն ուսին դրած:

— Ի՞նչ եյիր մտածում, յերք այս տկլորը կարմիր բայդաղը ձեռքին վազում եր ձորն ի վեր, — ճշաց քյաբաբչի Սողոմն իր աջ բռունցքը կատաղությամբ ցցելով նրա քթի առաջ:

— Դրա ձեռին կարմիր բայդաղ չի յեղել, — պատասխանեց Թյունին դրականորեն:

— Դա չկինի, դրա յեղբայրը լինի, հորյեղբոր տղան լինի, կամ թե վերջապես մի ուրիշ տկլոր լինի, դա ինձ համար միևնույն ե. Ի՞նչ եյիր մտածում այն ժամանակ, ի՞նչ... հիմա յես խորհուրդ հարցնում, հ՞ը...

Մղդմի Ակոբը կարծես քնից հանկարծ սթափված, ուստեցըրեց իր քիթը Թյունու ականջին ու արհամարհական հարցականով նույնպես ճշաց.

— Հը...

Այսպես, պարապ մնացած նախկին ջոջերի խումբը գյուղի ցեխոտ և ծուռ ու մուռ փո-

ղոցներում շրջելով, դարդերը քամուն եր տաւլու: Սակայն հանկարծ Թյունին անսպասելի կերպով կանգ առավ, ճպճպան աչքերի աղաչական հայցքը խոնարհաբար ուղղեց դեպի Սողոմը և արտասահնեց.

— Վայ թե մտնեմ կոռպերատիվ:

Սողոմը պատասխանի փոխարեն միայն հայնոյեց, իսկ մղդմին խեթ-խեթ նայեց նրան:

Այդ միջոցին

նույն հորթարած  
Սամուլը քրտնքա-  
կոխ հետ եր վազում.  
Նա կորցրել եր հոր-  
թը և զլուխը կորց-  
րած՝ վաղելով նրանց  
մոտից, ար ե խով  
փոտը խփեց ցեխին  
տափակ և ցեխի մի  
մեծ ցալքուն տվեց  
քյաբաբչու դնչով:

— Ավանակ, — գոչեց քյաբաբչին:

Բատրակ Սամուլը վաղելով բարձրացավ մի կտուր, վորպես անվտանգ տեղ և գոռաց.

— Դուկաջ ընկած դուզուններ, դուկաջ ըն-  
կած դուզուններ...



— Տղերը, յանի բան բրառուրդ անում էք, —  
անսպասելի կերպով հարցրեց մզգսի Ակոբը, քթա-  
ծակերից ոգն արագությամբ ներս քաշելով:

— Ի՞նչը:

— Այդ լակոտ Սամուլը մեղ ե ասում, դու-  
լաջ ընկած դուզդուններ, բա դուք զլխի չեք  
ընկնում, — պատասխանեց ինքն իրեն, իիստ շար-  
ժելով դեմքի իմաստության ջղերը:

Զոջերը մի բոպե միմյանց յերես նայեցին:

— Ե՞րի հա՛... այ թե բանը ուր ե հա-  
սել, — ասաց քյաբարչի Սողոմը, աջ ցուցամատը  
մոտեցնելով ճակատին, բա եղ շանը մի լավ ու-  
շունց չտամ, — ավելացրեց նա՝ զայրացած նայե-  
լով ներքեկից վերև մզգսի Ակոբին, աջ ձեռի  
բռունցքը սաստիկ սեղմելով և թափահարելով  
իր յերկար վերաբկուի տակ:

— Քաշվենք, քաշվենք այս-  
տեղից, — ասաց մզգսին սրանեղու-  
թյամբ, աջ ձեռի թաթը համապա-  
տասխանորեն շարժելով, և խումբը  
նահանջեց Թյունու դարդին դար-  
ման չարած:

— Դուլաջ ընկած դուզդուն-  
ներ, — դեռ լսվում ե նրանց հե-  
տեից:

Բատրակն իր վրեժն առավ:



### ԹՅՈՒՆԻ, ԾԱԳԱՐ ՅԵՍ ԲԵՐԵԼ...

— Կարելի՞ յե, ընկեր վարիչ:

— Համեցնք, — ձայն տվեց վարիչը ներսից:

Կոռպերատիվի գրասենյակի մի փեղկանի  
ահազին դուռը բացվեց ականջ ծակող ճոռոցով  
և մեկը կարտուզը դլխին թեք դրած, ներս  
մտնելով ասաց.

— Բարյագ:

— Բարե, սպատասխանեց վարիչն, աչքը  
թղթից չեռացնելով:

— Լսել եմ, ձեզ ծառայող ե հարկավոր:

— Այս, հարկավոր ե, — ասաց վարիչը,  
դուխը շբարձրացնելով:

— Վորքան ե ոռճիկը:

— Բաան ոռւբլի:


— Բայց չե վոր մենք «սպեց ենք»:

— Ո՛, դուք «սպեց եք», — բայցականչեց  
վարիչը, գլուխն ակնածությամբ բարձրացնելով  
դեպի նա. — բայց կարեմ դուք Թյունին եք:

— Այս, իսկական թյունին յես եմ:

— Այդ գեղաքում՝ ձեր ռոճիկն ե ուժուն  
ռուբլի, — ասաց վարիչը և հրավիրեց նրան նըս-  
տելու, — ձեր տունը շինվի, դե շուտ ասելիք  
ե՞ն... ախր յես ել զարմացա, թե այս ով եր,  
վոր գրաբար բարե տվեց:

— Գործն այնպես տանեմ, վոր աշխարհը  
զարմանա. յես թյունին եմ, նախկին վաճառա-  
կան և այժմ վորոշել եմ ժողովրդին ծառայել:



Եք ճանաչում, մենք դրա կաշին դաբախանից  
դիտենք, իզուր եք դրան վստահում այդ պաշտոնը,  
— ասացին կոռպերատիվի վարչության անդամնե-  
րից մի քանիսը, սակայն վարիչը նրանց ապա-  
ցուցեց, վոր մասնագետները շատ են կարևոր  
կոռպերատիվի համար:

Ված կանգնեց տե-  
ղից և նրա ձեռ-  
քը բռնելով՝ խորին  
շնորհակալություն  
հայտնեց, վոր նա  
ժողովրդի շահը բար-  
ձրը ե դառնում սե-  
փականից:

— Ընկեր վա-  
րիչ, թե դուք նոր

ժողովուրդը ծեփ եր տվել կոռպերատիվը,  
յերբ թյունին անցավ դագգահի այն կողմը: Մար-  
դիկ նրան այստեղ տեսնելով՝ ապուշ կտրեցին, —  
ախր, թե այս թյունին ա, վոր ժողովուրդը սրա-  
նից փախչում ա ինչպես սատանայից, բա այդ  
վնաց մտավ այստեղ:

— Այտա, վայ թե սա հրաշք ա, — ասում  
եյին նրանք միմյանց և աչքերը տրորելով կըր-  
կին բացում ու հորանջելով նայում եյին զար-  
մացած:

— Թյունի, մի մուշտարին զի տու, թյունի:

— Դե լավ-լավ, դուք ել ժամանակ զտաք  
մասխարա քցելու, — ասում եր թյունին ու ըն-  
դարձակ կոռպերատիվի մեջ դես վազում, դես  
վազում, իբր թե տեսէք, տեսէք հայտնի «սպեց  
եմ»:

Յերեկոյան, յերբ կոռպերատիվը փակեցին,  
Փորսողենց Արտաշը մոտեցավ թյունուն և ա-  
սաց.

— Թյունի...


— Համմե:

— Այժմ ընկեր թյունի, այնպես չե:

— Իրավունք ունես:

— Մենքքեզ չհասանք, համա դու մեզ հասար:

— Եղ մինը ճիշտ ասիր, — ասաց թյունին,  
խիմելով նրա ուսին և մնաց տուն:



Յերբ Թյունին տուն հասավ, գրապանից հանեց մի քանի կտոր շաքար և դրեց սեղանի վրա։ Նրա մայրն ուրախացած վրա պըծավ և շաքարի



կտորները ձեռքի  
մեջ շուռ ու ման  
անելուց և հրճվելուց  
հետո՝ գնաց թեյ  
գնի, իսկ Թյունու  
քույր որիորդ Մա-  
նուշակն արտասա-  
նեց՝ ծոր տալով և  
պելացած աչքը շա-  
քարից չհեռացնե-  
լով։

— Թյունի, շա-  
քար ես բերել...

— Գրապանն շատ

ե փոքր, գրապանս, հիմա ել դարձու եղ դարձավ  
— ասաց Թյունին մտահոգված ու զունչը մոտե-  
ցնելով պատին քաշած փոքրիկ հայելուն գոչեց։

— Այ թե կարտուզով մեյմունի նման եմ,  
Մանուշակ, այնպես չե՞:

— Իհարկե մեյմունի յես նման, պատաս-  
խանեց Մանուշակը, գրականորեն թափահարելով  
զլուխը։



— Իսկ իմ բուխարու գրակմով։

— Քո գրակով, ի՞նչ կասեմ, աղա յես։  
— Բա վոր գրակը քեշի՞ յեմ դնում։  
— Քեշի գրած՝ քեթխուզում յես, համա սկ-  
սու, վոր քիթու շատ ա սուր։

— Կարտուզին ել սուր քիթ ա ուզում, եղ  
լավ ա; իսկական ընկեր եմ դառել. Եհ, ի՞նչ ա-  
նենք, վոր արտաքուստ մեյմունի յեմ նման, բա  
վոր ներսս մաքուր ա:

— Մեյմունն ել ա մարդ, Թյունի ջան,-  
ասաց նանը թեյը բերելով, — դու դրա համար  
դարդ մի՛ անի. գրապաններդ բե՛ր շինեմ։

Թյունին ապուշ կտրած, մի բոպե նայեց  
նանի միապաղաղ յերեսին և կարծես համոզվե-  
լով նրա ասածներին, հսնեց գլխարկը և քարշ  
անելով հայելուց, նսաեց թեյի։



## IV

## ԲԱՐԵԿԱՄԱՑԱՆ – ԲԱՐԵԲԱՐԱՑԱՆ

**Փ**որսողենց Արտաշը շատ վազուց եր աչքա-  
կրել Թյունու քբոջ Մանուշակին։ Շատ անդամ  
եր այդ առթիվ խոսք բաց արել, մարդիկ մեջ  
դցել, սակայն Թյունու մտքով յերբեք չեր ան-  
ցել Մանուշակին տալ նրան։ Վնչ թէ նրա հա-  
մար, վոր նա Մանուշակին արժանքով բարձր  
եր դասում, այլ վոր ինքն իրեն բարձր եր հա-  
մարում հասարակական դիրքով։ Բացի դրանից,  
Փորսողենց Արտաշը գյուղում աչքի յեր ընկել  
վորպես ծույլ և ձրիակեր և վոր, գլխավորն եր,  
լավ հոր վորդի յել չեր։ Թյունին շատ եր վեր  
ածել ու վեր հանել այդ հանգամանքը, սակայն  
յերբեք մտքովը չեր անցել, վոր Արտաշը նրան  
փեսա կարող եր լինել։

Այն ինչ այժմ Փորսողենց Արտաշն ամեն  
կերպ բարձրացնում եր Թյունու պատիվն ու  
մեծարում նրան, վորը իհարկե ազգում եր Թյու-  
նու հոգեբանության վրա։ Յեվ յեթե պատահում

եր, վոր մի վորեկ գյուղական սպասուղ խնդրում  
եր կտավը յերեք մետր բաց թողնել, Արտաշը  
գոչում եր։

— Բնակեր ջան, չի կարելի մի մետրից առ  
վելի, չի կարելի հասկանում ես։

— Ախը մի մետր տանեմ ինչ անեմ, հո-  
գնուդ մատադ, գոնե յերեք մետր տուր, վոր մի  
ջապիկ գուրս գա։

— Դե լավ, — վերջապես զիջում է Փորսո-  
ղենց Արտաշը; այդ գեպքում գնա Թյունուն  
խնդրիր։ Իսկ Թյունին ել սատանա մարդ, իրեն  
այնպես եր ձևացնում, իբր թե վոչինչ չի լսում,  
այլ աջ ձեռով իր բեխերն անընդհատ վերև ե  
սրում – բանից բեխաբար։

— Թյունի ջան, ընկեր Թյունի, ումուգս  
դու յես, այ Թյունի, — ասում եր գյուղացին և  
պաղատում յերեք մետրի համար։

— Յես քո շինքը ծուռը չեմ թողնի, կը-  
տում, համա իմացիր, վոր յես Թյունին եմ հա...»

Կոռպերատիվը բաց ե արել Թյունու բախ-  
տը. նա չաղացել, վերածնվել եր թե հոգեպես  
և թե նյութապես. իսկ Փորսողենց Արտաշի  
շնորհիվ նրա պատիվն առաջվանից ել ավելի յեր  
բարձրացել։ Այդ պատճառով նա Արտաշին  
սկսեց սիրել և առանց յերկար մտածելու Մա-  
նուշակին տվեց նրան ասելով։

— ԻԵ, հիմա վոր մենք բարեկամացնք:



— Այս, բարեկամացնք — բարեբարացնք, վրա բերեց Արտաշը:

— Սրանից հետո ել դարդ չունեմ, — ասում եր Թյունումայրը զյուղի աղբյուրի մոտ ջրի հերթին սպասող կանանց, իր աջ ձեռն ոգում տառանելով, — սադ կոռ-

պերասիվը Թյունում ձեռին ա, ի՞նչ ուզում ա, են ել անում ա:



Բարդի զյուղում մարդիկ լուսաստղին, գեռ զիշերով հանդն եյին գնում, ուշ վերադառնում. իսկ դաշտային աշխատանքներից հետո բոլորը շարունակ խմբված եյին լինում իրենց հարազատ կոռպերատիվի մոտ. Կոռպերատիվը զյուղական հասարակական կյանքի այն կենարոնն եր, ուր մարդիկ ուրախությամբ անց եյին կացնում կրնմ իրենց ազատ ժամանակը, կամ թե չե այնտեղ եյին վորոշվում զյուղի ցավոտ ու կնճռոտ հարցերը:

Կոռպերատիվը յերեկոները փակվում եր, բայց զյուղացիք հաճախ չեյին ցըվում, այլ շարունակում եյին իրենց զրույցը: Այդ հանգամանքը մի այնպիսի ծայրահեղության եր հասել վոր Գյուղխորհուրդը յերեկոն ստիպված եր լինում մինչև իսկ իր նիստերն այդտեղ բացողյագումարելու:

## V

### ՀՐԱԺԱՐԻՄՔ Ի ՍԱՏԱՆԱՅԵ

Շատ ուժեղ եր գյուղացիների կապը կոռպերատիվի հետ, սակայն թյունու ծառայության դեռ մեկ տարին չլրացած՝ փոխվել եր մարդկանց դիրքը դեպի կոռպերատիվը։ Մարդիկ սկսել եյին կասկածանքով վերաբերվել դեպի նա և այնուհետեւ ամեն կերպ աշխատում եյին խուսափել կոռպերատիվից։

Ինչումն եր բանը։

Կոռպերատիվը շարունակ ստանում եր ամեն տեսակի՝ բազմաթիվ ասլրանք։ Հակերը բացելիս բոլորը տեսնում եյին, վոր ի միջի այլոց ստացվել ե ամիրկա, գոն, բամբազյա և այլն. բայց հենց վոր մեկն ուզում եր գրանցից գնել իր կարիքների համար—ասում եյին չկա։

— Այսր վճնց չկա։

— Ենա չկա ելի։

Թե ում եյին վաճառում այդ կտորները, կամ ի՞նչ եյին անում, վոչ վոք հայսնապես չը դիտեր. սակայն բոլորն ել մութ կերպով զգում եյին, վոր այդ բոլորը թյունու և Փորսողենց Արտաշի սարքած բաներն են։ Բայց մի կարող եր դրանց դեմ խոսել։

Մարդիկ ճնշված եյին և չեյին կարող ծըպտուն հանել, վորովհետեւ թե թյունին և թե Արտաշը սասափիկ առաջ եյին դնացել գյուղում և

բոլորն ակնածում ու զլիարկ եյին հանում նըանց առաջ։

Գյուղացիներին մնում եր միայն հեռու կենալ կոռպերատիվից, այլես այնտեղ չհավաքվել և չզրուցել, վորովհետեւ այժմ այդ կոռպերատիվը փուշ եր գարձել ժողովրդի աչքում։ Յեկ այսպես՝ կորավ գյուղացիների հավատը դեպի կոռպերատիվ։

Այնուհետեւ սկսեցին զանազան բացասական լուրեր տարածվել կոռպերատիվի մասին, թե այնտեղ բոլոր ապրանքները կեղծ են, և թե կոռպերատիվի շաբարը շան վսոկուից ե շինված, սապոնը՝ մեռելների ջամդաքից և այլն և այլն։

Ժողովուրդը հուզված գոչեց միաբերան։

— Հրաժարիմք ի սատանայե, և շուռ տվեց յերեսը կոռպերատիվից. իսկ թյունին ոգտվելով հանգամանքից կըկին բացեց իր խանութը։

Բայց ի՞նչ խանութ...



## Ե Ե Ր Տ ԱՎՈՐՈՒՄ Ն

Այս որից, յերբ բատրակ Սամուլը Գյուղ-  
խորհրդի նիստին գոռաց գեպի քյաբարչի Սո-  
ղոմը.

— Դուքս, դուքս:

— Ախր հնչի, այ բալամ, ինչի, — ասում  
եր Սողոմը՝ խղճահարված ձեռքը փորին քսելով:

— Դուքս, այս քո տեղը չե:

Այդ որից հետո ավելի հակառիք կերպով  
դասավորվեցին գյուղի շերտավորութիւնների շա-  
հերը: Բատրակներն ավելի հանդուզն դարձան,  
իսկ մեծամարդն աստիճանաբար ձայնը փորը  
գցելով, հասարակական ասպարեզն ակամա զի-  
ջեց ավելի յերիտասարդներին ու բատրակներին:

Ժամանակի ընթացքում բատրակների մեջ  
սկսել եր աչքի ընկնել բատրակ Սամուլը, գեղի  
հորթարածը: Նա կարճահասակ և արտաքուստ  
տղեղ մի յերիտասարդ եր, սակայն հանդուզն՝

իր խոսքերով ու վարմունքով: Տեղի-անտեղի նա  
մարդկանց յերեսովն եր տալիս նրանց արարք-  
ներն ու հանցանքները:

— Ել պատիվ չմնաց, հարգանք չմնաց, —  
շարունակ դանգատափում ելին նրա հարվածներին  
յենթարկվողները:

— Տն, դու են  
չես, վոր մեռելի  
շորերը գողացար, —  
զոռում եր Սամուլը  
Գյուղխորհրդի ան-  
դամների ընտրու-  
թյան ժամանակ՝  
մղպսի Ակոբի հա-  
ցելին, կամ թե մա-  
տը մեկնելով գեպի  
քյաբարչի Սողոմը  
բացականչում:

— Ում փորը  
մտավ վագոնով գե-  
ղական ալիքն, ում, ասա...

— Վագոննվ... վագոննվ... հուզումից ար-  
տասանում եր մեղադրվողն, իր հսկայական փո-  
րը յերկու ձեռքերի մեջ առած՝ պտտելով աջից  
ձախ և ապա ձախից աջ, ցանկանալով լռելայն  
հասկացնել, թե այ խալիս, մի տեսէք, տեսեք,



ի՞նչ հիմքար բան եւ ասում եղ շունը, ախր վագոնով ալիրն ինչպես կմտնի ես փորի մեջ:

Յեվ այսպես վարկաբեկվում եյին մարդիկ. դյուզի իշխանությունն սկզբում աննկատելի կերպով անցնում եր յերիտասարդությանն ու բատրակներին: Այս հանգամանքն իհարկե հուզում եր առաջ բերում նրանց մեջ, վորոնք այսուհետև ճարները կտրած, ուրիշ գործ չունենալով, դարձան բամբասանքների միակ հեղինակը գյուղի պուճախներում:

— Փերուշան, Փերուշան, գեսն արի, — այսուհետեւ ձայն եյին տալիս նրանք գյուղի տավարածին:

Փերուշանն իր հսկայական չոմբախն ուսին դրած՝ գալիս և լուռ կանգնում եւ կանչողների դիմաց:

— Տու, դու ի՞նչ ես, վոր քո վորդին գեղի տեր և լիս ընկեր, — գոռում եր Սամուլի թշնամի թյունին:

Փերուշանը, վոր նույնպես կարճ բոյ ուներ, վոչինչ չեր պատասխանում, այլ չոմբախն ուսից իջեցնելով, հենվում եր նրան և լուռ նայում:

— Մեղավորը յես եմ, յես... արտասանում եր Սողոմը գլխին խփելով:

— Ինչի՞—արհամարհական յեղանակով հարցրեց տավարած Փերուշանը:

— Քսան տարի հաց ես ուտում... յես եմ քեզ հացի տեր շնորհ, յես... յես եմ քեզ նախուապան կարգել:

— Ի՞նչ կասես դրան Փերուշան, — դիմեցին մյուսներն իրենց մասները նրա աչքը կոխելով:

Հայտնի չեր, թե այդ գժգոհությունն ինչով կվերջանար, յեթե բատրակ Սամուլին Կարմիր Բանակ չտանելին: Դյուզի յերիտասարդությունը Սամուլին ուրիշների հետ միասին հանդիսավոր կերպով ճանապարհ գցեց Կարմիր Բանակ:


— Ել յետ չգաս, — ասաց Սողոմը նրա հետեւից:

— Ել զուր բան ա, գիր ու կապ արի, — պատասխանեց մզգսի Ակոբը:

— Քո գրի զորությունը... բացականչեցին զոռքաները և զլուխները խոնարհելով՝ ձեռքերը զրեցին կրծքներին:

Բատրակ Սամուլը գնաց բանակ, գժգոհությունը վերացավ գեղի նա, սակայն ավելի խորացավ այն հակաղլությունը, վոր արդեն գյությունը ուներ շերտավորութների միջև:

Պայքարը գյուղում չդադարեց:



Անցավ մի վորոշ ժամանակ, յերբ մի որ ել  
տավարած Փերուշանն իր չոմքախն ուսուղ դրեց:  
— Եղ ո՞ւր:

— Գնամ Սամուլիս տեսության, — ասաց  
Փերուշանը և իր տվարծուղը լցնելով սև բոքն-  
ներ, բռնեց Լենինականի ճանապարհը։ Դրանից

հետո չանցած  
մի շաբաթ Փե-  
րուշանը վերա-  
դարձավ իր ճա-  
նապարհորդու-  
թյունից և զյու-  
ղի յերիտասար-  
դությունը շրջա-  
պատեց նրան։

Փերուշանը  
մանրամասու  
պատմեց Սամուլի  
մասին, Կարմիր  
Բանակի մասին  
և այն մասին,  
թե ինչպես այն-  
տեղ բոլորին  
կարդացնում են,  
վորով և Կար-



միր Բանակը հանդիսանում է վոչ այլ ինչ, յեթե  
վոչ մի կատարյալ ուսումնարան։

— Ուրիշն Սամուլն այժմ կարողանում է  
կարդալ, — հարցը եց շրջապատողներից մեկը։

— Հե մարդ ա գառել, հե կրկիտ  
կարդում, հե կրկիտ կարդում,  
վոր ել կարալ չեմ, — պատաս-  
խանեց Փերուշանը և իր  
հսկայական փախախով սըր-  
բեց յերեսի քրտինքը։ Այ-  
նուհետև հետաքրքրվողների  
հարց ու պատասխանին բա-  
վարարելու համար Փերուշանը մանրամասը պատ-  
մեց, թե ինչպես Սամուլի մեծավորն իրեն թև-  
անցուկ անելով, տարել, ցույց ե տվել Կարմիր  
Բանակայինների ազգուստը, նրանց գործերը և  
ամեն ինչ հասկացը ել։

— Բա գաղան չանցավ, բիծա, — հարցը եց  
մեկը հեղնանքով։

— Հա, բալա ջան, յես ել մեծավորին ասի,  
հսկեր, ինձանից հեռու, գաղան կքաշվի, նա ել  
թե եսքան զորքն ըստի... ի՞նչ գաղան, յես ել  
ենա ամոթ արի ասեմ, թե գաղանը մենք վոչին  
ենք ասում։



Փերուշամին շրջապատողները սրտանց ծիծաղում ելին նրա միամտության վրա և միեւնույն ժամանակ ուրախանում, վոր անզրագետ Սամուլն արդեն կարդալ ե սովորում, մանավանդ յերբ իմացան, վոր նա Կարմիր Բանակի ծառայությունից հետո, մտադիր ե գնալ Յերեւան, կոռալերատիվի կուրսերում սովորելու:

Ավելի յերիտասարգները ցնծում և թոշկոտալով յերազում ելին այն որը, յերբ իրենք ել հպարտորեն կերթան Կարմիր Բանակ, այնտեղից ել Յերևան՝ կուրսերում սովորելու:



Վ  
VII

## ՄԱՃԿԱՆ ՀԱՂԹԵՑ

Որը կիրակի յե. ամբողջ գյուղը իրար և անցել:

- Տղերք ջան, վազե՞ք:
- Վազե՞ք, հա վազե՞ք...
- Աբա, գըս գվա՞րը...
- Դըս թյունու գուքանը, թյունին դոչեր ա կովացնում, դոչեր, վազե՞ք, հա վազե՞ք:
- Բարդի գյուղի բոլոր գյուղացիները գլուխները կորցրած հայ-հավարով վազում են դեպի թյունու խանութը:


Ամբողջ գյուղը հավաքված ե նրա խանութի դիմացի փոքրիկ հրապարակում, վորի մեջտեղում դեռևս կանգուն մնացած մետրաչափ կոճղի վրա ծալապատիկ նստած ե թյունին հաղթական, սրածայր դդակը գլխին թեք վրած:

Մղպսի Ակոբը և քյաքարչի Սողոմն ասլանդավլանի նման թիկն են տված կոճղի այս ու

այն կողմը և ժողովրդի իրարանցումը դիտելով՝  
բեխերի տակ քմծիծաղ են տալիս ու յերբեմն  
թյունու ականջին ինչ վոր բաներ են փսփսում  
չարախնդությամբ։

Ժողովուրդն արդեն շրջան է կազմել, վորի  
մեջտեղում յերկու հակայական դոչեր յետ ու  
յետ գնալով՝ կրկին վազում են առաջ և զարհու-  
րելի կերպով խփում են միմիանց։ Թյունին սաս-  
տիկ հուզումից ուժնորեն թափահարում ե աջ  
ձեռքը և հստած տեղը վեր ու վեր թռչելով՝  
բղավում է կատաղությամբ։

— Մաշկա՛, տներ գա։



Ամբողջ ժողովուրդը վորպես մի անձ դո-  
ռում է կրկնելով Թյունու խոսքը։

— Մաշկա՛, տներ գա։

Մաշկան կրկին յետ է գնում և առաջ վա-  
ղելով խփում է կատաղի։

— Մաշկա՛, տներ գա, կրկին գոռում է ամ-  
րոխը հուզված, վոր սարից իջնող հեղեղի նման  
տարութերվում է մթազնած։ Հակառակ բանակը  
թույլ է և սըսկել է լուռ։ Նրանց դոչի սիրտն  
ել է վախ ընկել։

Մինչդեռ Մաշկան այս անգամ յետ կվա-  
ղեր, մյուս դոչը փախսավ և Մաշկան վազելով  
նրա հետեից, կատաղությամբ խփեց նրա կող-  
քին։

— Կեցցե՛, -- դոչեց Թյունին կոճից ցած  
թռչելով, և ամբոխն անգուսավ սկսեց ցնծալ։

## ԹՅՈՒՆՈՒ ԴՈՎՐԱՆԸ

**Թ**յունին քաղաքագետ ե և կարողանում ե հասարակական հարաբերությունների մեջ մի այնպիսի գրություն ստեղծել, վոր իր անձնական շահը բարձր դասվի։ Այդ պատճառով հենց վոր կոռպերատիվի գործերը վատ գնացին և ժողովուրդը փախակ այստեղից, նա գտավ, վոր այժմ հասել ե այն ժամանակը, յերբ կարող ե փոսկի հնձել։

Յեկ Թյունին կրկին բաց արավ իր խանութը, սակայն այս անգամ ավելի շքեղ և ավելի խորամանկ ձեռվ։ Նա ամեն կերպ աշխատում եր ժողովրդին փախցնել կոռպերատիվից, նրա մասին սուտ լուր եր տարածում։ Դոչերի կը ռիվը սովորական բան եր դարձել, ուստի նա ձեռնարկեց աքաղաղների կոփիվերին, վորոնք ավելի ևս մեծ հետաքրքրություն եյին վառում ժողովրդի մեջ։

— Թամաշակ յե, վաղե՞ք, — զոչում եյին դյուղացիք ու վազում գլխապատճառ։

Այսպես Թյունու խանութին ամբողջ որը շրջապատված եր գյուղացիներով, վորոնք այլ ևս աչքով աչք չունեյին կոռպերատիվի հետ, վորը նրանց համար մի բոռ գրող եր գարձել։

Կոռպերատիվը նսեմացավ, ուր այնուհետեւ շատ քչերն եյին հաճախում, մանավանդ, վոր այնուեղ չկար այն ապրանքը, վորի կարիքն ուներ գյուղացին։ Ամիրկան, կտավը, բամբաղյան Թյունու մոտ եր, բայց թե վհրտեղից եր նա ձեռք բերում այդ ապրանքը՝ գա գաղտնիք եր բոլորի համար, չնայած, վոր բոլորի սրտում ինչ վոր կասկած եր յեսում։ Մղոսի Ակոբը և քյարաբչի Սողոմը հասկացնում եյին ժողովրդին, վոր կոռպերատիվի լեղակը լեղակ չի, իսկ կոռպերատիվի լուցկին քաղաքում վառելիս քուքուրդը թուչում և մարդկանց աչքն ե քոռացնում։

Թյունու ապրանքը գովական ե, և ժողովուրդը ձագ տված ճանձի նման դժմում ե նրա խանութի շուրջը. իսկ խանութում ասեղ զցելու տեղ չկա:

Թյունու քեֆին ել քեֆ չի հասնում։ Նա իր սրածայր բուխարու գդակը գլխին թեք գրած՝ կանգնել ե գաղգահի այն կողմը։



— Թյունի ջան, շաքար քաշի, բրինձ քաշի. Թյունի ջան, չիթ կտրի, այ Թյունի, ջան Թյունի, կտրի, հա կտրի, քաշի, հա քաշի, դուչում եյին գյուղացիք ամեն կողմից:

— Ալա, դուք ինձ ճանաչում եք, արա ինձ Թյունի կասեն ե... յես վաճառական մարդ եմ. կոոպերատիվս վո՞րն ա... դոչում եր Թյունին և թոցնում արշինն իր ձեռքերի մեջ: — Դե, Թյունի ջան, իմ գործն ել վերջացրու, խատառ եմ \* — շոապեցնում եյին զանազան կողմերից:

— Ել ի՞նչ ես ուզում, ասա համարձակ:

— Ամիրկա ել տուր:

— Աչքիս վրա, ինչքան ես ուզում, — ասում ե Թյունին իջեցնելով թարեքից ամիրկի մի սեծ թոփի:

— Թե կտաս, մի տաս մետք կտրի:

— Տո, տախ ել խռաք ա, — ուզում ես քսանը կտրեմ, համա յես մետրով չեմ ծախում:

— Բա կոոպերատիվում մետրով ա:

— Դե վոր եղաքես ա, ասա տեսնեմ ի՞նչ ա մետքը, — հարցը Թյունին վրա պրծած՝ իր գայրացած դունչը մոտեցնելով նրա անմեղ քթին:

— Յես ի՞նչ գիտեմ, ի՞նչ ա:

— Բա արշինն ի՞նչ ա:

\* Շտապում եմ:

— Արշինը հլա չորս թիզա ա: Ողորմի հորդ, տեսանը, վոր արշինը գիտես. մենք մետքի ժողովուրդ չենք, բալամ, մերը արշինն ա:

— Բա դու արշինի տակ 60 կողեկ ես տառւմ, համա կոոպերատիվում մետքն ա եղ գնին:

Թյունու կզակը դոշում ե բարկությունից՝ զսպում ե իրեն: Խանութում գանվողների զրույցը մի բոպե դադարեց և բոլորը հետաքրքրությամբ հետեւում եյին խոսակցության, և շունչներն իրենց պահած սպասում, թե ինչով կվերջանա: Բայց Թյունին խորամանկ ե, նա առաջարկում ե գրագ բռնել, վորի համար ինքը կդնի հարյուր մանեթ, իսկ նա մեկ մանեթ. և յեթե այդ կտորից կոոպերատիվը բաց թողնի վաթսուն կողեկով, ինքը ձեռք կքաշի իր հարյուր մանեթից:

— Ի՞նչ կասեք սրան, այ խալիս, հանկարծ գոչեց Թյունին, կատաղորեն խոժոռելով իր աշքերն այս ու այս կողմը:

— Թյունին ճշմարիտ ա, Թյունին ճշմարիտ ա, — բացականչեցին բոլորը միաբերան:

Յեվ այնուհետեւ Թյունին ապրանք ե բաց թողնում չասպանդ՝ արագությամբ պտտելով արշինն իր ձեռքերում: Մարդիկ վորպես հպատակներ կանգնել են դլափեր նրա դիմաց՝ ձեռ-

քերը ծալած դոշերին և ամեն մի ապրանքի համար առանձին գլուխ խոնարհելով, չնորհակալյուն են հայտնում:

— Ե՞ն, դարդակ շնորհակալությունն ի՞նչ կանեմ. սարից գալիս եք, Թյունու համար մի զայմախ ել չեք բերում, — բարձրածայն գոչեց մեկը:

— Այտա, ի՞նչի՞ չենք բերի, բա խոմ ջիպտավար չենք, հասկանում ենք, — պատասխանեց նրան մի ուրիշը: Սակայն այդ միջոցին գյուղացիներից մեկը, վորի չուխան քսանից ավելի կարկատան ուներ, հանեց իր խուրջինից մի սրհան, յերեսը կարմիր փալասով ծածկած, և մեկնեց Թյունուն:

— Ես ի՞նչ ա, — հարցրեց Թյունին:

— Ղայմախ ա քեզ համար, — պատասխանեց գյուղացին, սրհանը Թյունուն տալով, և Թյունու բերանի ջուրը գնաց:

— Թյունու դով-րանը բացվել ա, բերեք, հա բերեք. համա ձեղ մատադ,



որա ֆոտը մի որ վեր կլի, — կամացուկ ասաց իր խոսակցին գյուղացիներից մեկը, վորը նստած եր խանութում արկղներից մեկի վրա, կզակը հենած իր ձեռնափայտին:

## ՀԱՎԱՍԱՐԱԿԱՆԸ ՀԱՌ ՏՈԾՆԳՈԼԱ, ԻՄԱՏԵՔ


**Չ**մեռ ե—որը կիրակի:

Սպիտակ ձյունը սավանով ծածկել ե ամբողջ յերկիրը, իսկ Բարդի գյուղը, վոր տնկված ե քարափի ծերին, նմանում ե քարի գլխին պպղած մի քութվալի՝ սառուցի լուլաները բեղրից քաշ յեղած:

Գյուղացիք մտել են իրենց ողաները և բուխարու մոտ հավաքված զոռ են տալիս աթարին:

— Աթար ջան, աթար, դու յես մեր փըրկությունը, — ձայնակցում են նրանք Խոճահարված և միմյանց հրելով կալչում են բուխարուց:

Իսկ Թյունու տանը մեծ քեֆ ե: Յերկար թաղթն ի վեր ծալապատիկ բազմել են գյուղի քեթխուղաները, նրա աջ կողմից մղոսի Ակոբն



ե, ձախից՝ քյաբառչի Սողոմն ե, այնուհետեւ ուշ րիշները, և բոլորը զոռ են տալիս հացի դառն արաղին, վորը Թյունին հարկավոր դեպքում գողառուց միշտ քաշում ե ձորի այրերից մեկում: Սենյակի մի կողմում ել թիթեղյա վառարանն ե վառվում, վորի մեջ փայտի ճիւղուների վրա հագցրած խորովածն ե տժժում:


— Ես ել քո կենացը մղոսի, քո շվաքն անպակաս լինի... զոչում ե Թյունին կարմրած և խմելով արադն, ըմպանակը տալիս ե քյաբառչի Սողոմին, վորն իր հերթին կրկնելով Թյունու խորքը՝ կուլ ե տալիս արադը և ըմպանակը հաջորդաբար հանձնում ե հետեւյալ հարկանին: Մինչև ըմպանակը կատավեր սեղանի շուրջը՝ մնացածներն առնում են սև բոքոնի կտորները և խորովածի հյութի մեջ թրջելով ուտում են ու ձեռքերը դոշին քսելով բացականչում:

— Ուսայ...  
— Թյանի ջան, խորովածդ լավն ա, համա դու են ասա, թե թողին հալալացրի՞ր. չունքի դե զիտես ելի, յես քրիստոնյա մարդ եմ, — ասաց մղոսին, խորովածի մի ահագին կտոր բերանը քցելով:

— Արխեյին կեր, մղոսի, — պատասխանեց քյաբառչի Սողոմն՝ ավելացնելով, — հենց ենա թողին սատկում եր, վոր Թյունին դանակը հաս-

յրեց. աչքու վրան եր, դանակը տվեց, դեռ շունչը վրան եր:

— Դե վոր շունչը վրան եր, նշանակում ե հալալացրել եք, հանգստացավ մղողին և սուփրի մեջտեղում դրած սինու միջից կրկին վերցրեց խորովածի մի մեծ կտոր:



Թեփը թեժացել եր, ինչպես թեժացել եր և վառարանի կրակը:

Մարդիկ վերջացրել եյին իրենց կենացները և այժմ միաբերան թյունու գովքն են անում և նրան հաջողություն ցանկանում: Բոլորի կարծիքն այն ե, վոր կոռպերատիվի բանը բուրդ ե և ժողովուրդն այնտեղ ել վոտք չի դնելու:

— Տո, ինձ թյունի կասեն, գիտեք, թյունի, կոռպերատիվս վո՞րն ա, հլա մի յերկու անդամ թյունի ասե՛ք... բացականչեց թյունին և առնելով արագի ըմպանակն ավելացրեց.

— Հավասարականը հա տունդոլա:

— Հավասարականը հա տունդոլա, — կըրկնեցին բոլորը միաբերան և յերկուղածությամբ

նայեցին թյունուն, մինչև նա կխմեր ըմպանակի ողին:

Թյունին ուռած, վրած և բուխարու գդակը զլսին թեք դրած՝ նայում ե այս ու այն կողմը, քեփը չաղ ու լիքը բերանով փուք ե բաց թողնում ինչպես մի շոգեկառը.

— Փուհ, փուհ, փուհ...

— Խելքիդ մատաղ, խելքիդ, թյունի. յանի դուք բան բառուրդ արի՞ք, այ խալս, — ասաց մղողին, աջ ձեռքի ցուցամատը վերև ցցելով:

— Ի՞նչը, — հարցրին բոլորը զարմացած:

— Հավասարականը հա տունդոլա, յանի ուզում ա ասի, թե կոռպերատիվը հա տունդոլա:

— Հա-հա-հա... բոլորը քրքջացին միաբերան, իսկ թյունու մոտ նստողները շփելով նրա կոնակն՝ ավելացրին.

— Գիտնակ ա, գիտնակ:

— Հենց այդ միջոցին ձռռալով բացվեց տան դուռը և ներս մտավ Փորսողինց Արտաշը, թէի տակին մի ահազին բան՝ ճիլորի մեջ փաթաթած. նա բարե տալով անցավ խանութը, վորը բնակարանի շարունակությունն եր կազմում: Թյունին իսկույն վեր թռավ տեղից և վագեց Արտաշի հետևից: Քեփ անողները միմիամնց յերես նայեցին:

— Քանի մեար ա, հարցրեց թյունին կտմացուկ:

— Յերեսուն:  
— Բյաղ ա:  
— Այս, — ասաց Արտաշը, և կամացուկ բացարեց, վոր ամբողջ հակի մեջ այս անգամ հենց այդ մի թոփ բյազն եր, իսկ վաղն ել մի մեծ թոփ բամբազյա կրերի:

— Այդ կտորներից մի մետք ուրիշի չասա, տեղով վոսկի ա, հասկացար, — ասաց Թյունին՝ մոտեցնելով իր աջ ցուցամատը նրա քթին և ավելացրեց, — վորքան արժե, վճարիր և բեր, դա գողություն չի, այլ իսկական վաճառականություն... և նրան տարով 15 ոռւբլի, բերած բյազի արժեքը, ականջում փափաց, — զգուշ հա...

Թյունին Արտաշի հետ թևանցուկ՝ ներս մտավ սենյակը և յերկու թևերն ուժգնությամբ վերևից ներքև թափահարելով բացականչեց չտեսնված վոգերությունից գլուխը մթագնած.

Հավասարականը հա տոքնդոլա, ինմացեք, — առանձնապես շեշտելով և յերկարացնելով իմացեք բառի առաջին վանկը, և բոլորը՝ կատարները տաքացած հացի դառն արադից, միաբերան գոչեցին նույն շեշտով և ուժգնությամբ.

— Հավասարականը հա տոքնդոլա, ինմացեք:


---

## X

### ԱՅ ԽԱԼԽ, ՀԱՍԵՇ, ԹՅՈՒՆՈՒՆ ՄԱԾԿԵՑԻՆ

Թյունու դովբանն յերկար չտեսեց:  
Մի գեղեցիկ որ ել կենարոնից քննություն  
յեկավ, վորը մի ամբողջ շաբաթ կոռպերատիվը  
տակն ու վրա անելուց հետո՝ թյունու խանութն ել քննության յենթարկեց: Փորսողենց  
Արտաշին շատ չարչարեցին, — թե ում ես ծախել այսքան բամբազյան, ամիրկան և այլն. նա  
շատ մարդկանց անուններ տվեց, վորոնք ել յեկան ու հայտարարեցին, վոր  
սուտ ա, իրենք այդ տեսակ  
ապրանք վհչ տեսել, վոչ ել  
տոել են: Վերջի վերջո բանտարկեցին Փորսողենց Արտաշին և հետո թյունուն,  
վորի խանութն ել կնքեցին:

Արտաշն ու Թյունին նստեցին մինչև գարունք: Յեկ մի



կիրակի որ եր յերբ արել պըլսլում եր յերկընքի ծերին, մի քանի մարդիկ սկսեցին գյուղամիջում ճվալ.

— Ընդհանուր ժողով, ընդհանուր ժողով...

— Արա, ընչի՞ ժողով ա,— հարց եյին տալիս շատերը:

— Արդար դատաստան ա, ցուցադրական դատաստան...

— Եհ, բան չունի՞ս, դատաստանս վո՞րն ա, ոլատասխանում եյին գյուղացիք և շարունակում եյին իրենց անխոռվ զրույցն այստեղ-այստեղ նստուածձ:

Դատական կազմն ամբողջ որն սպասեց դպրոցի սրահում, վորտեղ պիտի տեղի ունենար ցուցադրական դատը և քոռ ու փոշման ցրվեց, վորովհետեւ վոչ վոք չհավաքվեց, հետաձելով այն, մինչև հետեւյալ կիրակի:

Հետեւյալ կիրակի յել մի քանի մունետիկ դարձյալ գնացին ճվացին.

— Ընդհանուր ժողով, ընդհանուր ժողով, — սակայն գյուղացիներից վոչ վոք տեղից չշարժվեց և մունետիկները դարձյալ քոռ ու փոշման յեկան հայտնեցին, վոր գեղացիք դալիս չեն:

— Ախր ինչի՞ չեն գալիս. — զարմացած հարցնում եր դատավորը, մտածելով՝ չլինի թե գյուղացիների համակրանքը թյունու կողմն եւ:

— Բնկեր ջան, յես ի՞մ... զալիս չեն, ելի, — ոլատասխանեց մունետիկը և քորեց ծոծրակը:

— Խելնք ջան, այստեղ արի, — կանչեց մունետիկին սրահում զտնված հասակավոր գյուղացիներից մեկը, — գնա՞մի կտեր ծերի կանգնիր և զի տուր, թե այլ խալս հասեք, թյունուն մաշկեցին:

Դատական կազմը ժպաաց, իսկ մունետիկը դուրս թռավ և մի քանի բոպեյից հետո լսվեց նրա զընդան ձայնը.

— Այ խալս, հասեք, թյունուն մաշկեցին...

— Արա թյունուն, — հարցը ին մի քանիսը և թռան գեպի դպրոցի սրահը:

Այսուհետեւ բոլորը միմյանց ձայն տվին.

— Այ խալս, հասեք, թյունուն մաշկեցին, հեյ, հեյ...

— Մաշկեցին, թամաշեն բաց ելավ, հասեք, հասեք, — արձագանքեցին մյուսները և սկսեցին վազել...

Կտուրների և գեղերի գլխից ցած եյին թըռչում մարդիկ, ձեռքերին ցավ պատճառելով և վոտքերը ջարդելով. շատերը գործերը կիսատ եյին թողնում, յեղանը խոտի մեջ ցցված՝ այլս դուրս չեյին հանում, կամ կացինը, վոր պետք եւ



հենց վրա բերեր փայտին խփելու, այլևս չի  
խփում, այլ զցում ե ձեռքից ու վազում:

Վազում են գլխապատճ, մեկը մյուսին  
տրորվելով. վորն ընկնում ե, վորը վլորվում,  
բայց մնացածը կանդ չի առնում, այլ վազում  
շնչապատճ: Շներն ել յենթաղբելով, թե գայ-  
լի հավար ե, բայ մտած մարդկանց հետ, թըռ-  
չում են առաջ:

Յեկ այսպես մեծ ու փոքր իրար խառնված  
վազում են անկարգ. վորն առանց փափախի,  
վորն առանց տրեխի և կամ տրեխի փոկերը յե-  
տկից քարշ գալով, կամ պաճիճները կորցրած, ու  
այսպես լցվում են դպրոցի սրահը:

Սրահում այլևս տեղ չկա, բայց գալիս են,  
անվերջ գալիս. ծեփ են աալիս ամբողջ շենքը,  
բռնում դռւու, կտուր ու պատուհան. միմիանց  
բոթում, հրում, տեղ անելու գոնե իրենց աչ-  
քին, վոր միայն տեսնեն, թե թյունուն ի՞նչպես  
պետք ե մաշկեն:



## ԱՐԴԱՐ ԴԱՏԱՑՄԱՆ

### Դատն սկսվեց:

Դատավորը կարդաց մեղադրական ակտն  
այն մասին, թե Թյունին մտել ե կոռպերատիվ,  
վորպես մամնագետ, սակայն նա վոչ միայն չի  
արդարացրել իր վրա դրած հույսերն, այլ նույն  
իսկ իր պաշտոնը ի չարն ե գործ դրել հետեւյալ  
ձեռով. նախ և առաջ նա ինքն ապրանք ե գողա-  
ցել. յերկրորդ՝ նա գործադրել ե բոլոր հնարա-  
վոր միջոցները վարկաբեկելու կոռպերատիվը,  
վորից հետո Փորսողենց Արտաշի միջոցով դուրս  
ե բերել այնտեղից բյազը, բամբագիան և այլ  
մի քանի ուրիշ ապրանքներ, վորոնց կարիքը  
շատ մեծ ե վոչ միայն Բարդի գյուղում, այլև  
ամբողջ յերկրում: Դրանից հետո դատավորը  
կարդաց Փորսողենց Արտաշի գործը, վորը մե-  
ղադրվում եր նրանում, վոր կոռպերատիվի բո-  
լոր կարեոր ապրանքները ծածուկ դուրս ե բե-

բել և վաճառել միմիայն մի անձնավորության,  
այն եւ Թյունուն, այն ինչ կոսպերատիվն այդ  
ապրանքներն ստացել եւ անմիջապես սպառող-  
ներին բավարարելու համար:

Այն վկաներն եւ, վորոնց անունները տվել  
եր Փորսողենց Արտաշեն՝ իբրև այդ ապրանքը  
գնողների, յեկան բացե ի բաց հայտնեցին, թե  
սուտ ա, ավելացնելով.

— Բնկե՛ր դատավոր, համեցեք, տեսե՛ք մեր  
տները, կրակ տաս շորափոտ չի դուրս գալ, ես  
մի տարի ա, ով ա ճոթի յերես տեսել:

— Քաղաքացի Փորսողյան, դուք քաղաքա-  
ցի Թյունուն ճոթ վաճառե՞լ եք:


— Վհչ:

Այնուհետև դատավորը Թյունուն հարց տվեց,  
թե Փորսողենց Արտաշը քեզ համար թոփով ճոթ  
բերե՞լ ե: Նա ել նույնպես պատասխանեց.

— Վհչ:

Դատավորը մի քանի հարց ու պատասխա-  
նից հետո՝ սկսեց խոսել, վոր Խորհրդային իշ-  
խանության բոլոր գործարանները պետական են,  
վորոնք իրենց ապրանքը բաց են թողնում կոո-  
պերատիվներին ու ապացուցել, վոր Թյունին  
այլ կերպ չեր կարող ձեռք բերել այդ ապրանք-  
ները, յեթե վոչ միայն Փորսողենց Արտաշ  
գործակցությամբ:

Դրանից հետո սկսեց խոսել դատական մե-  
դադրողը, թե Թյունին շահամն ե, գնդ ե, կոո-  
պերատիվը վարկաբեկնդ եւ և այն և այն: Յեկ  
վերջապես, վորպես հասարակության համար



միանգամայն վնասակար տարր՝ նրան պեսք և  
յենթարկել սոցիալական պաշտպանության գե-  
րագույն չափին:

— Ըսկեր ջան, եղ գերազույնը խուրդիր,  
չհասկացանք, — ձայնեց մեկը հեռվից;

— Դա մահվան պատիճն է, — պատասխանեց  
դատավորը:

— Ո՞ւ, — մոընչաց ամբոխը սարսափահար:

— Բա դուք ասում եյիք, պիտի մաշկենք,  
հիմի ել ուզում եք խեղճի մեղքի տակ մտնել,  
չե, մենք ուզի չենք, չե... դոչեցին մի քա-  
նիսը:

Դատավորը դանգահարեց և լոռություն տի-  
րեց, փորից հետո դատական պաշտպանը բացատ-  
րեց, թե Թյունին շատ բարի մարդ է, ժողո-  
վրդական և ժողովրդին մինչև իսկ շատ հար-  
կավոր մի ահճնավորություն:

— Ճիշտ ա, ժողովրդի կաշին մաշկելում  
շատ ա հարկավոր, — ձայնեց մեկը:

Պաշտպանը դարձյալ շարունակեց իր խոռքն  
անորոշ կերպով. նրա բառերը չեյին շաղկապ-  
վում և ամբողջություն չեյին կազմում, փորով-  
հետև նա ինքն ըստ յերկույթին համոզված չեր  
այն բանում, ինչ վոր խոսում եր: Յերբ նա իր  
խոռքը վերջացրեց, վորոշ յեղրակացություն չհա-  
նեց, ուստի ժողովուրդը վոչինչ չհասկացավ և

անորոշության մեջ մնալով՝ բնականարար մի  
մասսայական հարց տվեց.

— Հետո:

Յեթե այդ չլիներ մի դատական միջավայր,  
անպայման այդ պաշտպանը վեր կկենար և  
կասեր.

— Հետո՝ ջաներիդ սաղություն:

Այնուհետև թե դատավորը և թե մեղա-  
զը կըկին խոսեցին և փորոշակի պահանջեցին  
ամենայն խստությամբ պատժել Թյունուն և  
Փորսողենց Արտաշին:

Հասարակությունը շատ լավ գիտեր, թե  
Թյունին ինչ պտուղ է, սակայն վճռի խիղճը  
թույլ կտար նրա մեղքի տակը մտնելու, — չե՞ վոր  
մեր դրկիցն է, միասին աղ ու հաց ենք կերել, —  
մտածում եյին բոլորը, ուստի փորպեսզի կան-  
խեն վորևէ խստագույն պատիժ, վոր կարող եր  
տեղի ունենալ, նրանք միաբերան դոչեցին.

— Մաշկել:

— Բայց մինչև յերբ մաշկել, — հարցրեց  
դատավորը:

— Հե՞ մինչև խասիաթի փոխելը, — դոչեց  
ամբոխը միաբերան:

— Զե՞ վոր մեր որենքով նախատեսնված չե  
մտրակումը, մենք մտրակով ծեծելու իրավունք  
չունենք: Այդ բացատրությունից հետո ամբոխը

մի ըսպէ կարծես շշկվեց, խորասուզվեց լոռւթյան մեջ. բայց հեռու նստողներից մեկը բացականչեց.

— Թե վոր եղակես ե, հանցավորներին Յեւրևան զրկենք խասիաթ փոխելու։ Բոլորն իրենց գլուխները մեքենաբար հետ շրջելով՝ նայեցին դեպի նա և կարծես դրանով համոզվեցին նրա ասածի ճշմարտության մեջ, և ապա գլուխները կրկին ուղղելով միաբերան գոչեցին.

— Յերեվան... խասիաթ... Յերեվան...

Դատավորն ընդմիջում հայտարարեց, վորից հետո կարդաց դատավճիռը, վոր հանցավորները կուղարկվեն Յերեվան՝ ուղղիչ տանը խասիաթ փոխելու։

Այ թե Սողոմոնի դատաստան եր, հա, — ասացին գյուղացիներն ինքնաբավական ու ցրվեցին։

## XII

### ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ՏՈՆԸ

Բարդի գյուղը բոլորեց իր յերեք տարին այն որից, յերբ Թյունուն ուղարկեցին բնավորություն փոխելու։ Յերեվանի ուղղիչ տանը Փորսողենց Արտաշին պահել ելին մի քանի ամիս, վորից հետո նա անմիջապես վերադարձել եր գյուղը. սակայն գեռես պաշտօն չունենալով՝ շրջում եր գյուղում յեթիմի նման և զլիսին հազար անգամ վայ տալիս, վոր չկարողացավ իրեն զսպել և անժուլյատը լի հանցանք դործեց, վորի համար և ստիպված ե տուժել։ Իսկ Թյունումասին վոչ մի տեղեկություն չկար, վոչ վոք վոչինչ չգիտեր, թե վարտեղ ե նա և ինչ ե շինում. յերբեմն մի սուտ եր ընկնում մարդկանց բերանը, վորը միմիանց փոխադրելով՝ ծամոնի նման հոլովկում եր ատամների տակ և մի հանգույցում փառելով՝ դուրս եր շպրտում, վորպես անպետք բան։ Մի անգամ ել լուր տարած-

վեց, թէ Թյունին Պարսկաստանում մոլլա յէ գարձել: Անցնում եր ժամանակը, աստիճանաւրար մոռացվում եր Թյունին, դառնալով անցյալի սեփականություն. և յերբ գյուղի մեծ մարզիկ խոսում եյին հին-հին գարուց հիշատակ գործերի մասին, նրանք միաբերան բացականչում եյին նշանակալից կերպով գլուխները պարտելով.

— Այ գիտի, Թյունի, հա...

Այդ յերեք տարվա ընթացքում բոլորովին փոխվել եր Բարդի գյուղը. նա արտաքուստ դարձացել եր և գեղեցկացել: Նախ և առաջ գյուղը վերաշնվում եր նոր հատակագծով, կառուցվում եյին շատ մասնավոր և հասարակական շենքեր, վորով Բարդին բոլորովին անձանաչելի յեր դառնում, մանավանդ, վոր յեկվոր տարրն ել սաստիկ բազմացել եր: Կյանքն այստեղ յեռում եր, իսկ կոռպերատիվը ծաղկել, հասել եր իր զարդացման գագաթնակետին: Յեվ այժմ կարելի յէ ասել, վոր գյուղացիշն նյութապես չեն նեղվում և վհաջի բանի կարիք չեն զում, մանավանդ վոր այստեղ բացվել եւ վարկային ընկերություն, վորը գյուղացիներին վարկ եւ տալիս և ձեռնտու պայմաններով բաց եւ թողնում յերկրագործական ամեն տեսակի մեքենաներ: Զկան այլևս նշանավոր պարագիտներ, յեղածնե-

րի թևերն ել կտրված են, այնպես վոր գյուղական մասսան անմիջապես դործ ունի կոռպերատիվի հետ:

Յեվ պատահեց, վոր Բարդի գյուղացիները լրագրերից իմացան, թէ յեկող շաբաթը հոչակ-վում եւ կոռպերատիվի շաբաթ: Այդ շաբաթվաընթացքում առաջարկվում եւ կրկնապատկել կոռպերատիվի անդամների թիվը և առհասարակ տարածել կոռպերատիվի սկզբունքներն ու գաղտիաբները:

Կոռպերատիվի շաբաթն սկսվեց ձմռնամը-տին: Մարդ չկար գյուղում, վոր այսպես թէ այնպես չմասնակցեր շաբաթին, վորովհետև բուլորը պարապ՝ աներումն եյին գտնվում:

Գյուղի հրապարակում նվազում եր զուռնան, վորի շուրջը խոնված բազմությունը տունական տրամադրությամբ ուրախանում և կեցցե եր գոչում:

Կիրակի որը կոռպերացիայի շաբաթի վերջին որն եւ ուստի գյուղում նշանակվեց մեծ միտինգ ճիշտ այստեղ, վորտեղ յերեմն Թյունին զոչեր եր կովացնում: Իսկ Թյունու մետրաշափ կոճղը դեռևս կանգուն եւ մնացել այնտեղ, վորի վրա այժմ բարձրանալով խոսում են յեկուցողները:

Ժողովուրդը մորթի փափախներով բոլորել  
ե կոճղը և հեռվից նա նմանում է բերում \*  
հանգարտ կանգնած վոչխարի հոտին՝ հեռու վո-  
րես ահից ու չարից։ Նա ծխում է յերկար չի-  
բուխ և տրմբացնում է զլուխը վորպես համա-  
ձայնություն՝ զեկուցողի խոսքերի։

Տեղական կոոպերատիվի վարիչը մի հոե-  
սորից հետո բարձրացավ կոճղի վրա և ասաց.

— Մ-ս-ս...

— Այ տղերք, ձայներդ, ընկերը բան ա  
ասում, — զայրացած կրկնեցին մարդիկ՝ հրելով  
միմյանց կողերը, և վերականգնեց լոռությունը։

— Այժմ ընկերներ, — հայտարարեց նա, —  
կխոսի կենտրոնի հրահանգիչ ընկ. Սամվելը, վո-  
րը հենց նոր վրա հասավ մեր միտինգին։

— Այտա, եղ ինչ Սամվել ա... վալթե մեր  
Սամուլն ա. ի՞նչ ես ասում, նա կարմիր Բանա-  
կային ա, համ ել կոոպերատիվի բաներ նա վո՞ր-  
աեղից գիտի...»

Մինչ մարդիկ կտատանվեյին անորոշության  
մեջ, աշխատով կոճղի վրա թռավ կաշվե հա-  
գուստով մեկը, ճիշտ այնպես, ինչպես ոռու  
զազախը կթռչեր իր սիրելի նժույզի վրա։ Նրան  
սակայն առաջին հայացքից քչերը ճանաչեցին,

\* Բերա—կթակայան։



վորովհետեւ նա արտաքուստ շատ եր փոխված,  
բայց հենց վոր արտասանեց, — ընկերներ բառը,  
մատնեց իրեն իր ճղավուն ձայնով, դա բատրակ

Սամուլն եր և ամբողջ ժողովուրդը ինչպես մի անձնավորություն գոչեց վոգեորված՝ առանձնապես ծոր տալով վերջին—յես վանկը.

— Արա Սամուլ, եղ դո՞ւ յես...

— Այն, յես եմ, պատասխանեց Սամուլը և ամբոխը կտրկան յեղած հոտի նման վրա տվեց դեպի այն կողմը, ինչ ուղղությամբ կանգնած եր նա: Բոլորն ուղում եյին նրան տեսնել և նրա խոսքը լսել:

— Ենկերներ, — կըկնեց նա և շարունակեց, — կոռպերատիվը մի այնպիսի բան է, վոր ստեղծված ե ձեզ համար, առանց վորի գյուղացիությունը չի կարող յոլա գնալ:

— Ճշմարիտ ա, — բացականչեցին գյուղացիք և վորպես համաձայնության նշան խոնարհեցին իրենց գլուխները:

— Կոռպերատիվի գոյության հիմքը դժւք եք, — շարունակեց Սամուլը, — թե դուք գոյություն ունեք, ուրեմն պետք ե լինի և կոռպերատիվ:

— Պա, պա, ինչ իմաստունն ա տղե՛ք, — բացականչում եյին գյուղացիք, իսկ Սամուլը խոսում եր վոգեորված, խոսում անվերջ և արագ:

— Հիշում եք, սրանից մի քանի տարի առաջ, վոր վաճառական Թյունին նույն այս կոճղի վրայից ձայն եր տալիս. — մհաշտարի, վոտդ վեր կալ, չուստ արի. իսկ մենք այսոր ահա նույն այդ

տեղից քարոզում ենք կոռպերատիվի ճշմարտությունը:

— Վայ լեզվիդ մատաղ, լեզվիդ, — բացականչում եր ամբոխը՝ վոգեորված գլուխը կորցրած և ծփալով հետզհետե ավելի սեղմվում դեպի կոճղը:

Այսուհետեւ Սամուլը մանրամասն պատմեց, թե կոռպերատիվս ինչպես բախտավորություն կբերի մարդկանց, յեթե բոլորը համոզված մըտնեն նրա շարքերը, այսինքն անդամագրվեն:

— Մեր պարտքը լինի, մեր պարտքը, Սամուլ ջան, — բացականչում եյին ամեն կողմից անկեղծորեն:

Յեվ Սամուլը խոսում եր վոգեորված, խոսում ինչպես մի սիրելի գորավար իր հավասարիմ մարտիկների հետ, վորոնց նա նախապատրաստում եր աշխարհասասան գործեր կատարելու:

Յերբ նա հաղթական իջավ կոճղից, բոլորն իրենց ձեռքերը նրան մեկնեցին, և կարծես անսահման կարոտով բռնված՝ յուրաքանչյուրն աշխատում եր նրան իր կողմը քաշել:

— Այ Սամուլ ջան, ասա յե... վհնց ես... բա վո՞րտեղ եյիր... լսվում եր ամեն կողմից:

Այդ ըոսպեյին հանկարծ նրա աչքովն ընկան նախկին մի քանի ջոջերը, մորոնք առանձնացած,



վորպես մարադ մտած կատուներ, նայում եյին  
Սամուլին:

— Դուշաջ ընկած զուզղուննե՛ր, — արտա-  
սանեց Սամուլը, մեկնելով մատը գեղի ջո-  
ջերը, — դուք ելի՞ խելքի չեք գալիս հա... և  
նրանք վորպես մեղապարտներ քաշ արին իրենց  
գլուխները, իսկ Սամուլը շրջապատված իր ըն-  
կերներով՝ դիմեց գեղի կոռպերատիվի շենքը,  
ուր գյուղացիք արդեն սկսել եյին անդամա-  
գրվել:



8 - 903

51934

35 Կ.ՊՊ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՀԵՍՏՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ — ԶԱԿԿՆԻԿԱ  
ԲԱԳՈՒ — ԱԴՐՊԵՏՏՐԱՏ  
ՅԵՐԵՎԱՆ — ՀԱՅԳԻՐՔ